

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՔՃՅԱՆ

Ծնվել է 1942 թ. դեկտեմբերի 21-ին Ստամբուլում:

1949—1959 թթ. սովորել և ավարտել է տեղի Վիեննական Մխիթարյան վարժարանի նախակրթական և միջնակարգ բաժինները:

1959—1963 թթ. սովորել է Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի բարձրագույն բաժինը:

1962—1965 թթ. սովորել և ավարտել է Ստամբուլի համալսարանի գրականության բաժինը, որտեղ ուսանել է դասական լեզուներ, պատմություն և բնկերաբանություն: Միաժամանակ հետևել է Ս. Խաչ դպրեվանքի ընծայարանի դասընթացներին և 1963 թ. ձեռնադրվել սարկավագ:

1965 թ. հուլիսին, ձեռամբ Ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարքի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1966—1973 թթ. Գերմանիայի Բոնն և Բոխում քաղաքների համալսարաններում ուսանել է գերմաներեն լեզու և մանկավարժություն: Միևնույն ժամանակ տեղի հայ համայնքում ծավալել է ազգային-եկեղեցական զգալի աշխատանք:

1970 թ. Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանի ձեռքով ստացել է վարդապետական աստիճան:

1973—1976 թթ. Մարսելի հայոց Ս. Կարապետ եկեղեցու հոգևոր հովվությունն է կատարել:

1977—1990 թթ. վարել է Մարսելի հայոց Ս. Թարգմանչաց Մայր եկեղեցու հոգևոր հովիի պաշտոնը: Սրբազան հայրը հոգևոր հովվության կողքին զբաղվել է նաև կրթական ու մշակութային գործունեությամբ: Մարսելում հիմնել է Խ. Աբովյանի անվան միօրյա հայկական լեզվի վարժարան: Հայերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակել է բառարան:

1991 թ. ապրիլին նշանակվել է Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ:

1992 թ. մայիսին Կ. Պոլսո Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքի ձեռքով ստացել է ծայրագույն վարդապետության տասը աստիճաններ:

1992 թ. սեպտեմբերի 27-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, ստացել է եպիսկոպոսական աստիճան: